Գիտություն

ՆՈՅԵՄԲԵՐ
№ 11
(216)
2009 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

Նպատակը՝ գիտատար տնտեսության զարգացումն է

Սերժ Սարգսյանը այցելեց Գիտությունների ակադեմիա

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը վերջերս այցելել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենք: Երկրի ղեկավարը շրջել է հիմնանորոգված շենքում, ծանոթացել կատարված աշխատանքի որակին,- հաղորդում է ՀՀ նախագահի մամուլի գրասենյակը:

Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենքի հիմնանորոգումը կատարվել է «Տաշիր» բարեգործական հիմնադրամի միջոցներով: Շենքում տեղադրվել են նաև ջեռուցման համակարգ, ժամանակակից էլեկտրատեխնիկական սարքավորումներ:

Իրականացրած աշխատանքի համար «Տաշիր» բարեգործական հիմնադրամի հիմնադիր Կարապետյան ընտանիքը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ-ի Ոսկե մեդալով:

Հանրապետության նախագահը հանդիպել է նաև Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության անդամների հետ: Սերժ Սարգսյանը տեղեկացրել է, որ ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովի ընթացքում ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները ընթացքի մեջ են: Նշելով, որ գիտության ոլորտը շարունակում է պետության համար մնալ գերակայություն՝ Սերժ Սարգսյանն ասել է.

- Մեր նպատակը գիտահենք և գիտատար տնտեսության զարգացումն է, իսկ դա պահանջում է համապատասխան ուշադրություն:

Նրա խոսքով՝ չնայած գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի հարուցած դժվարություններին, թե՛ 2009, և թե՛ 2010 թվականների պետական բյուջեներով գիտության համար նախատեսված միջոցները չեն կրճատվելու:

Սերժ Սարգսյանը պատասխանել է նաև գիտնականներին հետաքրքրող հարցերին:

ՀՀ ԳԳ-ում նշվեց մեծանուն ճարտարագետ-գիտնական, Գլխավոր կոնստրուկտոր Սամվել Քոչարյանցի 100-ամյակը

Նոյեմբերի 11-ին ՀՀ ԳԱԱ-ում մեծ հանդիսավորությամբ նշվեց մեծանուն ճարտարագետ-գիտնական, Գլխավոր կոնստրուկտոր, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Լենինյան և ԽՍՀՄ պետական երեք մրցանակների դափնեկիր, Լենինի վեց շքանշանների ասպետ, ՌԽՖՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, մեր հայրենակից Սամվել Քոչարյանցի 100-ամյա հոբելյանը:

«Սենք, նշելով նրա հոբելյանը, հպարտ ենք, որ ունենք նման հայրենակից»,- իր ողջույնի խոսքում ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը:

ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Յուրի Շուքուրյանը ընթերցեց Ռուսաստանյան Դաշնային միջուկային կենտրոնի ուղերձը՝ ստորագրված կենտրոնի տնօրեն Վ. Կոստյուկովի, կենտրոնի գիտական ղեկավար, Ռուսաստանի ԳԱ ակադեմիկոս Ռ. Իլկաևի և գլխավոր կոնստրուկտոր, Ռուսաստանի ԳԱ ակադեմիկոս Յու. Ֆայկովի կողմից: Ուղերձում մասնավորապես նշված է. «Սենք գլուխ ենք խոնարհում Քոչարյանցի հսկայական վաստակի առջև, հարգանքի տուրք ենք մատուցում նրա լուսավոր հիշատակին: Միջուկային գիտության և տեխնիկայի խոշորագույն գործիչների աշխատանքի շնորհիվ, որոնցից է Սամվել Քոչարյանցը, մեր աշխարհն արդեն 60 տարուց ավելի ապրում է առանց մեծամասշտաբ պատերազմի սարսափների»:

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Չիլինգարյանը ներկայացրեց Սամվել Քոչարյանցի կյանքն ու գիտական գործունեությունը:

Ելույթներով հանդես եկան ակադեմիկոսներ Էդվարդ Ղազարյանը, Էվրիկ Աֆրիկյանը, Գեղարքունիքի փոխմարզպետ Կամո Գասպարյանը, մտավորականության ներկայացուցիչներ:

Սամվել Քոչարյանցի անունն ընդգրկված է Ռուսաստանյան Դաշնային միջուկային կենտրոնի ականավոր գիտնականների ցուցակում՝ Անդրեյ Սախարովի, Իգոր Կուրչատովի, Յուլի Խարիտոնի և այլ գիտնականների կողքին:

Սամվել Քոչարյանցը ծնվել է 1909 թ. հունվարի 7-ին Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ քաղաք): 1937 թ. ավարտել է Մոսկվայի էլեկտրատեխնիկական ինստիտուտը և կատարել գիտամանկավարժական աշխատանք տեսական էլեկտրատեխնիկայի ամբիոնում: Այնուհետև Ս. Քոչարյանցն աշխատանքի է անցել «Արզամաս 16-ում», որտեղ գտնվում էր Ռուսաստանյան Դաշնային միջուկային կենտրոնը: Երկար տարիներ զբաղեցրել է կենտրոնի Գլխավոր կոնստրուկտորի պաշտոնը: Նա մասնակցել է ԽՍՀՄ-ում ատոմային և ջրածնային զենքի ստեղծման և փորձարկման աշխատանքներին, հակահրթիռային պաշտպանության համակարգի մշակմանը: Ս. Քոչարյանցը մեծ ներդրում է ունեցել կոնստրուկտորների, փորձարարների, տեխնոլոգների գիտական խոշոր դպրոցների ստեղծման և զարգացման գործում: Շնորհիվ Ս. Քոչարյանցի աշխատանքներ են կատարվել միջուկային զենքի տեխնիկական բնութագրերը, արդյունավետությունը, անվտանգությունն ու հուսալիությունը բարձրացնելու ուղղությամբ:

Սամվել Քոչարյանցը կյանքից հեռացավ 1993 թ. օգոստոսի 4-ին:

Քոչարյանցի հայրենի քաղաքում՝ Գավառում, փողոց և դպրոց են անվանակոչված նրա անունով:

ՀՀ ԳԱԱ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ՀՀԳԱԱ արտասահմանյան անդամ Լեոն Պետրոսյանն ընտրվեց Դինամիկական խաղերի միջազգային ասոցիացիայի նախագահ

ՀՀ ԳԱԱ-ն շնորհավորում է ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Լեոն Պետրոսյանին՝ Դինամիկական խաղերի միջազգային ասոցիացիայի (IDGS) նախագահ ընտրվելու կապակցությամբ:

Լեոն Պետրոսյանը 35 տարի շարունակ գլխավորում է Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի և պրոցեսների ղեկավարման ֆակուլտետը, միաժամանակ մաթեմատիկական վիճակագրության, զանգվածային ապահովման և հուսալիության տեսության ամբիոնի վարիչն է: Նա ոչ անտագոնիստական դինամիկ խաղերի տեսության պիոներներից է: Մեծ աշխատանք է կատարում բարդ մաթեմատիկական տեսությունը մատչելի ձևով ներկայացնելու ոլորտի երիտասարդ մասնագետներին, ասպիրանտներին, ուսանողներին:

Ավելի քան 200 գիտական հոդվածների և 20 մենագրությունների հեղինակ է: Նրա աշխատանքների մեծ մասը թարգմանվել և հրատարակվել է ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում և Չինաստանում:

Մեծանուն գիտնականը սերտորեն համագործակցում է Հայաստանի գիտակրթական հաստատությունների հետ: Լեոն Պետրոսյանը գիտության ամենաժամանակակից ոլորտներից մեկին՝ խաղերի տեսությանը (որը կիրառվում է տնտեսագիտության, մենեջմենթի, միջազգային հարաբերությունների և կոնֆլիկտոլոգիայի, քաղաքագիտության, էկոլոգիայի մեջ) նվիրված ավելի քան 20 գիրք և ուսումնական ձեռնարկ է նվիրել ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանին: Գրքերից բացի գրադարանը նաև ստացել է «International Game Theory Review» հանդեսի 3 տարիների բոլոր համարները:

ՀՀ ԳԱԱ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Հայաստանի նախագահը, Ամենայն հայոց կաթողիկոսն ու Ջերարդ Գաֆեսճյանը բացեցին վերջինիս անունը կրող արվեստի կենտրոնը

«Կասկադի առանցքն ուղղված է օպերային, օպերայի շենքինը՝ Հանրապետության հրապարակին, նա էլ իր հերթին՝ դեպի Արարատը՝ հայոց արարչական ոգու սնուցման կենտրոնը: Այնպես որ, Կասկադում Գաֆեսճյան արվեստի կենտրոնի գործունեությունը լավագույնս նոր շունչ տվեց կառույցին: Գոհ եմ այսչափ բովանդակալի կիրառությունից»,- նոյեմբերի 7-ին կայացած կենտրոնի պաշտոնական բացման ժամանակ կարծիք հայտնեց Կասկադի հեղինակ, Հայաստանի ժողովրդական ճարտարապետ Ջիմ Թորոսյանը: Նրա հետ մեկտեղ կենտրոնի 7 սրահներով շրջեց քաղաքական, մշակութային, դիվանագիտական ոլորտը ներկայացնող հրավիրյալների մի հոծ բանակ՝ դեմքի հետաքրքրված, ապա գոհունակ արտահայտությամբ:

Կենտրոնի տերը՝ Ջերարդ Գաֆեսճյանը, շրջեց իր անունը կրող կենտրոնում Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին II-ի, մշակույթի և սփյուռքի նախարարներ Հասմիկ Պողոսյանի եւ Հրանուշ Հակոբյանի հետ: Ի՞նչ տպավորությամբ՝ անհայտ մնաց, քանի որ լրագրողների հետ զրուցեց միայն մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը. «Նշանակալի իրադարձություն է կենտրոնի բացումը, իսկ լինելիությունը Հայաստանի հեղինակությանն ի նպաստ է, քանի որ Գաֆեսճյան արվեստի կենտրոնը կարող է հետաքրքրել ինչպես ոլորտի պրոֆեսիոնալներին, այնպես էլ յուրաքանչյուր մարդու»:

Հանրապետական իններորդ գիտական նստաշրջան՝ նվիրված ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին

Նոյեմբերի 5-ին ՀՀ ԳԱԱ-ում մեկնարկեց ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին նվիրված հանրապետական իններորդ գիտական նստաշրջանը: Արվեստագիտության ասպարեզում իրենց բեղուն գործունեության համար Արվեստի ինստիտուտի վաստակաշատ գիտնականներ Մուրադ Հասրաթյանը և Գևորգ Գյոդակյանը պարգևատրվեցին ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով:

Նստաշրջանի նպատակն է խթանել արվեստաբանական միտքը և երևան հանել արվեստագիտության առջև ծառացած խնդիրները: Ինչպես նշեց Արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանը, նստաշրջանի ընթացքում արվեստագիտության տարբեր ճյուղերի մասին ընթերցված շուրջ 40 զեկուցումները կհրատարակվեն ժողովածուի տեսքով:

Նստաշրջանի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը: «Այս նստաշրջանով ամփոփվում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 50-ամյա գործունեությունը: Ի մի բերվեց 50 տարվա կատարված աշխատանքը, ներկայացվեց ներկայիս վիճակը և ապագա անելիքները»,- ասաց Վլադիմիր Բարխուդարյանը:

ՀՀ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն իր ողջույնի խոսքում ասաց, որ Արվեստի ինստիտուտը բավականին հաջողություններ է գրանցում: Նա կարևորեց այն փաստը, որ ինստիտուտում երիտասարդները մեծ ուշադրության են արժանանում:

Արվեստի ինստիտուտը գիտական միակ հաստատությունն է, որտեղ ուսումնասիրվում են հայ արվեստի գրեթե բոլոր ճյուղերը (կերպարվեստ, ճարտարապետություն, դեկորատիվ և կիրառական արվեստներ, երաժշտություն, թատրոն, կինո և հեռուստատեսություն):

Ստեղծման պահին ինստիտուտում գործել են ճարտարապետության, կերպարվեստի, երաժշտության բաժինները, որոնց հետագայում միացել են ժողովրդական երաժշտության, կինոյի և հեռուստատեսության, կիրառական արվեստի բաժինները:

Ինստիտուտում գործում են Արվեստաբանական գրադարանը, Ռուբեն Զարյանի անվան Շեքսպիրագիտական կաբինետ-գրադարանը,ժողովրդական երաժշտության բաժնի գրադարանը, Արամ Քոչարյանի անվան ձայնադարանը, Արվեստի ինստիտուտի արխիվը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին

Մեծարգո պարոն վարչապետ

Վերջին տասնամյակում Հայաստանում զարգացել են հակագիտական բնույթի պնդումներ Հայաստանում իբր եզակի հնագույն աստղադիտարանների գոյությունից մինչև եգիպտական, բաբելոնյան մշակույթների վերագրումը հայերին, որ Ադամը հայ էր և այլն: Այս անհեթեթությունները, սփռվելով եթերում և հակահարված չստանալով ակադեմիական ատյաններից, սկսել են ներխուժել արդեն դպրոցական և մանկական գրականություն :

Երկու օրինակ՝ «Ֆիզիկա և աստղագիտություն» 9-րդ դասարանի դասագրքից, (ակադ. է. Ղազարյան, հեղինակային խմբի ղեկավար, 2009 թ.: Նախորդ՝ գործող հրատարակությունը՝ 2001 թ.):

Պնդվում է, որ մեր ժայռապատկերներում կա վկայություն Երկրի գնդաձևության վերաբերյալ (էջ 213), մինչդեռ առ այսօր հայտնի չէ որևէ փաստ, որ մարդկությունը բրոնզե դարում կարող էր հասու լինել Երկրի գնդաձևության մասին:

Ապա Քարահունջ հորջորջվող հուշարձանն է՝ գունավոր լուսանկարով: Իրականում ոչ հուշարձանը կապ ունի այդ անվան հետ, ոչ էլ կա որևէ գիտականորեն քննված հիմք դրա աստղագիտական բնույթի մասին:

Քանի որ դասագրքերը պարտավոր են արտահայտել տվյալ գիտության ընդունված պատկերը՝ ընդգրկելով միայն աներկբա հաստատված փաստեր, առաջարկում ենք դպրոցական ծրագրերից հանել համապատասխան՝ 212-213 էջերը: Ձեռնարկել միջոցներ, որպեսզի տվյալ հակագիտական նյութերը հանվեն գովազդային և այլ տիպի գործառույթներից:

Հակագիտական ոտնձգությունները կարող են խոցելի դարձնել մեր մշակույթը, որը լի է բազմաթիվ իրական արժեքներով, որոնցով կարող է և պետք է հպարտանա մեր աշակերտը:

Վ. ԳՈՒՐԶԱԴՅԱՆ
Երևանի ֆիզիկայի ինստիտուտ՝ ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆ.
Ա. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆ.
Պ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ՝ տնօրեն
Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
ԳԱԱ թղթակից անդամ

Մարդիկ հիվանդանում են, իսկ ընկերությունները՝ հարստանում

Roche ընկերության եկամուտները «Տամիֆլյուի» վաճառքից կազմել են շուրջ 1 միլիարդ դոլար: Գրիպի դեմ ամենաարդյունավետ դեղամիջոց համարվող «Տամիֆլյուի» վաճառքի ծավալները այս տարվա ապրիլին, A/H1N1 նոր հարուցչի հայտնվելուց ի վեր, աճել են 10 անգամ: Բնակչության շրջանում տագնապի շնորհիվ շահույթներն ավելացնում են նաև դեղագործական այլ ընկերություններ, որոնք, բացի դեղորայքից, արտադրում են, օրինակ, դիմակներ: 3M ընկերությունը վերջին եռամսյակում 100 միլիոն դոլարի վաճառք է իրականացրել, իսկ ընկերության տնօրեն Փեթ Քեմբելը խոստովանել է, որ մայիսից գործարանները աշխատում են գերծանրաբեռնված: Համաշխարհային մեկ այլ հսկա Kimber-Ley-Clark-ը (Kleenex և Huggies ապրանքանիշների սեփականատեր) նույն շրջանում եկամուտներն ավելացրել 140 տոկոսով: Այլ ոլորտների ընկերություններ նույնպես գրիպի հաշվին փող են աշխատում: Իր վերջին գովազդում Domestos-ը պնդում է, թե մաքրող փոշին սպանում է գրիպի հարուցիչը:



ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների հանրագիտարան

Ակադեմիկոս Պավել Սարկիսովը

Ակադեմիկոս Պավել ՍԱՐԿԻՍՈՎ.

1963-ին պաշտպանել է թեկնածուական, 1978 թվականին՝ տեխնիկական գիտությունների դոկտորի ատենախոսությունները:

1990-ին ընտրվել է ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, 1997-ին՝ Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

2008 թվականին ընտրվել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ:

Պ. Ջ. Սարկիսովը հանդիսանում է առաջատար գիտնականներից և իտշորագույն մասնագետներից մեկը ֆիզիկական քիմիայի և սիլիկատային ու դժվարահալ անօրգանական նյութերի տեխնոլոգիայի բնագավառում: Նա մեծ ավանդ է ներդրել կարծրաֆազ և հեղուկաֆազ սիլիկատային համակարգերում բյուրեղացումը ղեկավարող տեսության հիմունքների ստեղծման ու մշակման գործում: Մեծ է նրա ավանդը նաև որոշակի բաղադրությամբ ապակենման և ապակեբյուրեղային նյութերի ստացման պրոցեսների հիմնական սկզբունքների ու օրինաչափությունների ձևակերպման հարցում: Բյուրեղացման պրոցեսների գիտական հիմունքների իր կողմից կատարված մշակումները հիմք են հանդիսացել նոր տեխնոլոգիաների և նոր նյութերի ստեղծման համար: Պրոֆեսոր Պ. Ջ. Սարկիսովի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ Ռուսաստանում հիմնադրվել են շինարարական նշանակության արդյունավետ դեկորատիվ-հարդարման նյութերի՝ խարամասիտալների և սիգրանի (սինթետիկ գրանիտի), ինչպես նաև տեխնիկական սիտալների արդյունաբերական արտադրությունները, որոնք իրենց կիրառությունն են գտել մեքենաշինության, ավիացիոն, հրթիռային և տեխնիկայի այլ բնագավառներում: Խարամասիտալների և սիգրանի տեխնոլոգիաները ներդրվել են արտադրությունում: Այդ նյութերը լայն կիրառում են գտել ինչպես Ռուսաստանում, այնպես էլ արտերկրում: Դրանց տեխնոլոգիաները արտոնագրված են աշխարհի բազմաթիվ երկրներում:

Պավել Սարկիսովը հեղինակ է ավելի քան 600 գիտական աշխատությունների, այդ թվում դասագրքերի, մենագրությունների, հայտնագործությունների և արտոնագրերի:

«Քիմիական տեխնոլոգիայի տեսական հիմունքներ» ամսագրի գլխավոր խմբագիրն է, Դ. Ի. Մենդելեևի անվան Ռուսաստանյան քիմիական ընկերության նախագահը, Ռուսաստանի քիմիկա-տեխնոլոգիական բուհերի ուսումնա-մեթոդական միության նախագահը: Բարձրագույն դպրոցի գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ է, Նյու-Յորքի ակադեմիայի և այլ կազմակերպությունների իսկական անդամ:

Ռուսաստանի Դաշնության պրեզիդենտի դափնեկիր (2000 թ.), ՌԴ կառավարության դափնեկիր (2002, 2006 թթ.): Պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր դրոշի և Բարեկամության շքանշաններով:

Պավել Սարկիսովը ծնվել է 1932 թվականին, Թբիլիսիում: 1956-ին, ավարտելով Մոսկվայի Դ. Մենդելեևի անվան քիմիկա-տեխնոլոգիական ինստիտուտը, աշխատել է բյուրեղապակու գործարանում: 1963 թվականից իրեն նվիրել է գիտությանը:

Պավել Սարկիսովի ողջ կյանքը գործնականում կապված է Մոսկվայի Դ. Մենդելեևի անվան քիմիկա-տեխնոլոգիական ինստիտուտի հետ (1992-ից՝ Ռուսական քիմիկա-տեխնոլոգիական համալսարան), ուր նա եղել է կրտսեր և ավագ գիտաշխատող, դոցենտ, պրոֆեսոր, պրոռեկտոր: 1985 թվականին ընտրվել է ինստիտուտի ռեկտոր և այն գլխավորել 20 տարի: Նրա ղեկավարությամբ ինստիտուտը բազում կազմակերպական և կառուցվածքային փոփոխությունների է ենթարկվել, դարձել համալսարան: Ակադեմիկոս Սարկիսովի նախաձեռնությամբ համալսարանում ստեղծվել են նոր ամբիոններ՝ մենեջմենթի և մարքետինգի, սոցիոլոգիայի, տրամաբանության և տնտեսական ինֆորմատիկայի, ինֆորմացիոն-համակարգչային տեխնոլոգիաների, նանոնյութերի և նանոտեխնոլոգիաների, բացվել են նոր մասնագիտություններ՝ արդյունաբերական անվտանգության, քիմիա-դեղագործական և կոսմետիկական նյութերի և այլն:

Մենդելեևի անվան Ռուսաստանի քիմիկա-տեխնոլոգիական համալսարանի պրեզիդենտ, ակադամիկոս Պավել Սարկիսովի դասագրքերով և ուսումնական ձեռնարկներով այսօր ուսանում են մասնագիտական բուհերի և քոլեջների ուսանողները: Նա ակտիվորեն մասնակցում է Ռուսաստանի բարձրագույն կրթության զարգացմանն ուղղված ուսումնական նոր պլանների, ծրագրերի և ուղղությունների մշակմանը: Նա Ռուսաստանի մաթեմատիկական և բնագիտական կրթության ոլորտի մի շարք դասընթացների պետական կրթական ստանդարտների մշակման Դաշնային խորհրդի նախագահն է, (ԽՍՀՄ) Ռուսաստանի Դաշնության քիմիկա-տեխնոլոգիական մասնագիտությունների բուհերի ուսումնա-մեթոդական միության և բազում ուրիշ հեղինակավոր կազմակերպությունների և ընկերությունների նախագահը:

Ակադեմիկոս Սարկիսովը ՅՈՒՆԵՍԿՕ-ի գծով շրջակա միջավայրի պահպանության միջազգային բազում ուսումնական ծրագրերի նախաձեռնողն է, քիմիական գիտության և կրթության գծով ՅՈՒՆԵՄԿՕ-ի Կենտրոնի պրեզիդենտը:

Պավել Սարկիսովը գիտական, մանկավարժական, կազմակերպչական և վարչական վիթխարի աշխատանք է կատարում: Նա Դ. Մենդելեևի անվան Ռուսաստանի քիմիական ընկերության նախագահն է, Ռուսաստանի քիմիկոսների միության փոխնախագահը, Մոսկվայի քաղաքապետին առընթեր էկոլոգիական կոնսուլտատիվ խորհրդի անդամ, «Քիմիական արդյունաբերությունն այսօր» միավորման տնօրենների խորհրդի նախագահը և այլն: Պարզապես զարմանալ է պետք, թե այդ նշանավոր գիտնականը, հասարակական գործիչը, գիտության և բարձրագույն կրթության տաղանդավոր կազմակերպիչը ինչպես է հասցնում կատարել իր ուսերին դրված այս վիթխարի, պատասխանատու պարտականությունները, և ամենակարևորը՝ կատարել փայլուն կերպով:

Պավել Սարկիսովի գիտության մեջ անցած ուղին՝ ականավոր գիտնականի բազմակողմանիության փայլուն օրինակ է, գիտնականի, որի ձեռքբերումները հիմնարար հետազոտությունների բնագավառում մեծ առաջընթաց են և որոշում են արտադրության մի ամբողջ ոլորտի և՛ գաղափարախոսությունը, և՛ տեխնոլոգիան: Եվ միանգամայն օրինաչափ է, որ Պավել Սարկիսովի աշակերտները այսօր կազմում են նրա իսկ ստեղծած բնագավառի կադրային ներուժի ոսկե ֆոնդը:

Ուղիղ մեկ տարի առաջ տված հարցազրույցում իրեն ուղղված՝ «Ե՞րբ մենք կկարողանաք մրցել արևմտյան գիտական դպրոցների հետ» հարցին,- ակադեմիկոս Պավել Սարկիսովը պատասխանեց.

- Ռուսաստանը շատ բան կորցրեց 90-ական թվականներին: Երբ նոր հազարամյակի շեմին մենք ուշքի եկանք, պարզվեց, որ շատ ենք հետ մնացել: Ու նաև քիմիայի բնագավառում:

Այսօր դեղամիջոցների 75 տոկոսը ներկրվում է արտասահմանից, և միայն 25 տոկոսը հայրենական արտադրության է: 2012 թվականին պետք է հասցնել գոնե 50-ը 50-ի: Խորհրդային տարիներին մենք ունեինք քիմիայի մոտ 75 ճյուղային ինստիտուտներ: Դրանցից ամեն մեկը զբաղվում էր որոշակի գիտական ուղղությամբ: Գոյություն ունեին ազոտի, քլորի արդյունաբերության, պոլիմերների, կաուչուկի պետական ինստիտուտներ: Վերակառուցման տարիներին դրանք բոլորը դարձան մասնավոր:

Կիրառական ինստիտուտները դադարեցրին իրենց գոյությունը: Իմ գործընկերները հաճախ հարց են տալիս՝ պե՞տք է արդյոք նորից վերածնել ճյուղային ինստիտուտները: Ես պատասխանում եմ՝ այսօր Ռուսաստանի քիմիական արդյունաբերությունը 97 տոկոսով մասնավորեցված է: Ուրեմն պետությունը ինչո՞ւ պիտի ֆինանսավորի կիրառական հետազոտությունները, որոնց արդյունքներից պիտի օգտվեն մասնավոր ընկերությունները:

Երկրում պետք է զարգանա այն պրակտիկան, երբ մասնավոր ընկերություններն իրենք են ստեղծում սեփական կիրառական ինստիտուտներ և զարգացնում գիտությունը:

Իսկ պետությունը իր համար գիտության գերակա ուղղություններ պետք է համարի այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են մարդու առողջությունը, երկրի պաշտպանունակությունը, հատուկ նյութերի քիմիան, այսինքն՝ այն ամենը, որոնք ստրատեգիական նշանակություն ունեն և ապահովում են Ռուսաստանի անվտանգությունը: Չմոռանամ, պետք է անպայման ստեղծել շրջակա միջավայրի մոնիտորինգի ինստիտուտ:

Պետության խնդիրը պետք է լինի հիմնարար գիտությունը, որը կապված է գիտելիքների ձեռքբերման հետ: Մեր, գիտնականներիս առաջին և գլխավոր խնդիրը պետք է լինի գիտելիքներ հայթայթելը, գիտություն ստեղծելը:

Իսկ ինչ վերաբերում է Ձեր հարցին՝ «Ե՞րբ մենք կկարողանանք մրցել արևմտյան գիտական դպրոցների հետ», պատասխանում եմ՝ 2012-2015 թվականներին մենք կհասնենք դրան:

Օգտական լինել հայրենի գիտությանը

Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ Ֆելիքս Ահարոնյանին մենք հանդիպեցինք ԳԱԱ Սփյուռքի բաժնի պետ Վանյա Բարսեղյանի աշխատասենյակում: Նա զրուցում էր Բյուրականի աստղադիտարանի երիտասարդ մի ասպիրանտուհու հետ: Երբ ավարտվեց զրույցը, որը երբեմն-երբեմն ընդմիջվում էր անգլերեն արտահայտություններով, պարզվեց, որ Ֆելիքս Ահարոնյանը պատրաստվում է միջնորդագիր-երաշխավորագիր ուղարկել Շվեյցարիա, որպեսզի սույն օրիորդը և ևս մի երիտասարդ մասնագետ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտից, մեկնեն Շվեյցարիա՝ մասնակցելու այնտեղ կազմակերպվող դասընթացներին: Անշուշտ, շվեյցարիացիների ծախսերով:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը ԳԱԱ արտասահմանյան անդամի դիպլոմ է հանձնում Ֆելիքս Ահարոնյանին:

Ֆելիքս Ահարոնյանը անընդհատ ժպտում է՝ ապացույց նրա կենսուրախության և լավ տրամադրության, անչափ հաճելի և հետաքրքիր զրուցակից է: Իսկական երևանցի է, Աբովյան փողոցում ծնված և մեծացած: Դպրոցն ավարտելուց հետո բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայի ֆիզիկայի ինստիտուտում: 1991-ին երիտասարդ ֆիզիկոսը մեկնում է Չիկագո, իսկ մեկ տարի անց՝ 1992-ին, հրավիրվում է Գերմանիա՝ Մաքս Բլանկի միջուկային ֆիզիկայի ինստիտուտ՝ դասավանդելու բարձր էներգիաների աստղաֆիզիկա:

1986-ին դոկտորական է պաշտպանել Երևանի ֆիզիկայի ինստիտուտում՝ տարրական մասնիկների և միջուկային ֆիզիկա մասնագիտությամբ:

Երբ տեղեկանում եմ, թե որքան գործ է կատարում Ֆելիքս Ահարոնյանը Հայաս- ➤5

Վարազդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 100

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Ես նրան հիշում եմ Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետում ուսանելու իմ առաջին իսկ օրից. երբ, իբրև ճարտարապետության ամբիոնի վարիչ, Վարազդատ Հարությունյանը զրույց անցկացրեց մեզ հետ: Դա ճարտարապետության առաջին դասն էր իմ կյանքում՝ մասնագիտական ու մարդկային, երբ կարծես առաջին անգամ մենք հասկացանք, որ ճարտարապետ լինել համարյա թե նշանակում է մերձենալ հավերժությանը: Մեր մասնագիտությունը մեզ ներկայացրեց իբրև արվեստների մայր, որտեղ ամեն մեկը տեղ չունի, որտեղ ընտրյալները միայն իրավունք ունեն մուտք գործել և որտեղ ամեն ինչից առաջ պահանջվում է ճշտապահություն, ազնվություն, նվիրում: Աշխարհը գեղեցիկ, ընդունելի և բնակելի դարձնելու արվեստը մեզ համար նոր շերտեր բացեց իր ու մեր ներսում, և մենք հասկացանք, որ, իրավ, աշխարհի ամենահարուստ, ամենագեղեցիկ և ամենաուժեղ տղամարդիկ ենք, որովհետև դառնալու ենք ճարտարապետ, և որովհետև մեր ուսուցիչը Վարազդատ Հարությունյանն է լինելու նաև: Ճարտարապետները, սովորաբար, և ես նրանց հետ, որոշ թուլություն ունեն ուսուցիչ համարել պրակտիկ ճարտարապետության անմիջական դասախոսին: Ինձ համար, և կարծում եմ, բոլորիս համար միշտ առաջինը եղել է Ալեքսանդր Թամանյանը: Տարիքի բերումով ես նրան չեմ տեսել, բայց իր գործերը մեր բոլորի դասագիրքն են: Հետո՝ Սամվել Սաֆարյանը, Ռաֆայել Իսրայելյանը, Գրիգոր Աղաբաբյանը, Կարո Հալաբյանը և նրանց փառահեղ փաղանգում, իհարկե, Վարազդատ Հարությունյանը: Զարմանալիորեն նրանք մեզ համար, որ նախ ուսանող էինք, հետո գործընկեր, դպրոց էին ու մտածողություն, աշխարհաընկալում և պարզապես վստահություն, որ հավատ ու ուժ էր ներշնչում ապրելու և ստեղծագործելու:

Վարազդատ Հարությունյանը ողջ կյանքում զբաղվել է ճարտարապետության տեսությամբ, պատմությամբ: Արագ և անաչառ արձագանքել է ժամանակակից ճարտարապետների բոլոր կառույցներին, ասել է իր մասնագիտական հեղինակավոր կարծիքը, որ միշտ ուղեցույց է եղել: Կարողանալ ներկայացնել հայ ճարտարապետությունն իր բուն խորքով, անհավանական գեղեցկությամբ, միջնադարյան ոսկեձեռիկ վարպետների միջոցով ժամանակակիցներին փոխանցել ազգային ճարտարապետության ոչ միայն տառը, այլև ոգին, գաղափարը, էությունը, քչերին է տրվում: Վարազդատ Հարությունյանը քչերից մեկն է, որ կատարելապես տիրապետելով իր գործին, գիտի նաև մանկավարժ լինել: Նա հիմա էլ աշխատում է ուսանողների հետ և ամեն հանդիպում, հավատում եմ, հանդիպում է ճարտարապետության անքննելի խորքերի և եզակի հրաշքների հետ, որ կոթող առ կոթող, դար առ դար, պահ առ պահ կենդանացնում է Վարազդատ Հարությունյանը: Հուզիչ է, որ նա 90 տարեկան է: Եվ՝ ոգևորիչ: Շատ ոգևորիչ, որովհետև ոչ նա, ոչ մենք չենք զգում նրա տարիքը: Թակեք նրա դուռը առավոտյան վեցին, ժպտադեմ կբացի և կտեսնեք, որ գրասեղանի մոտից է վեր կացել: Այլապես չէին գրվի մասնագիտական ծանրակշիռ հատորները, չէին գրվի հուշագրության քաղցր էջերը: Եվ գուցե դա է բացառիկ պայծառ պահում նրա միտքը, ճշգրիտ ու սրամիտ: Իսկ գուցե պատճառներից մեկն էլ նրա վանեցի լինելն է: Վանը Վարազդատ Հարությունյանի համար կորած ծննդավայր չէ, այլ մասն է նրա խոսքի, ապրումի, կյանքի: Վանը նրա համար ներկա է, որ ներկա է դարձնում նաև մեզ համար՝ հրաշալի հիշողությամբ պատմելով մի քաղաքի մասին, որտեղից դուրս է եկել վաղ մանկությունից և միայն իբրև զբոսաշրջիկ վերադարձել բոլորովին վերջերս...

Վարազդատ Հարությունյանի մասին կարելի է երկար խոսել ու երկար գրել, բայց, կարծում եմ ամենակարևորն այն է, որ նա այսօր մեզ հետ է, մեր կողքին և 90 տարեկանում էլ մնում է հաղթահասակ ու գեղեցիկ տղամարդ, որի տանն իր այգուց իր ձեռքերով քամված գինին են խմում, որի տանն առիթով ու անառիթ սեղան են նստում աշխարհի ամենատարբեր ծայրերից եկած հայ ու ոչ հայ ճարտարապետները, և բոլորին նա ունի ասելու իր խոսքը:

Ջիմ ԹՈՐՈՍՅԱՆ

Ճարտարապետության թեկնածու, պրոֆեսոր, ՀՍՍՀ վաստակավոր և ՍՍՀՄ ժողովրդական ճարտարապետ, ՍՍՀՄ գեղարվեստից ակադեմիայի իսկական անդամ, ՀՍՍՀ և ՍՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր «Հայաստանի Հանրապետություն», 16.11.1999 թ.

(Խոսքը գրված է Վ. Հարությունյանի 90-ամյակի առթիվ)

ԺԱՌԱՆԳՈՐԴՈՒԹՅԱՆ ՋԱՏԱԳՈՎԸ

Արդեն մեկ տարուց ավել է, որ Սարյան13 մենատան հարկի տակ և պատշգամբում չի հնչում Կոմիտասի և Եկմալյանի հայրենաշունչ երգերը հորս հոգեզմայլ ձայնով: Մեզ բոլորիս հրաժեշտ տվեց 21-րդ դարի դարասկզբին, ցանկանալով ըմբռնել ու կանխագուշակել ապագան ազգի համար, իր հիմնադրած գերդաստանի համար ու հայ մշակույթի համար: Նա ինչ որ մի վերուստ իջած հրահանգին ենթարկվելով իր կյանքի վերջին15 տարիները նվիրեց 20-րդ դարի իր ասպարեզի արդյունքների ամփոփմանը: Նա այդ արեց շատ ինքնատիպ ձևով՝ իր ուսուցիչների, ընկերների ու մասնագիտության ժառանգորդների · վերլուծական կենսագրականներով ու յուրաքանչյուրի ներդրումն արժևորելով: Փորձեց համայնավարական ժամանակաշրջանի փլատակների մոխիրներից որոնել, գտնել ու զտել այն հատիկներն, որոնք անկախ Հայաստանի բարերար մթնոլորտում ծլարձակեցին ու մեկ անգամ ևս աշխարհին ավետեցին հայկական մշակույթի և հատկապես ճարտարապետության այսօրվա նվաճումներն ու միջազգային մակարդակի բարձրացած շինարվեստը: Առաջին հայացքից թվում է, որ 20-րդ դարում ծավալված մշակույթի և նրա մասն կազմող ճարտարապետության բեմահարթակի վարագույրը փակող վերջին մոհիկանն եղավ: Հետո, մտորումներից հետո եկա մի մտահանգման. 20-րդ և 21-րդ դարերի սահմանագծի փոքր անտրակտից հետո նա բացեց մշակույթի և հատկապես ճարտարապետության բեմահարթակի վարագույրն ու էստաֆետը հանձնեց արդեն տարիքով առաջացած ժառանգորդ սերնդին՝ Թորոսյան, Գյուրզադյան և մյուսները: Արդյոք կարող է լինել սրանից ավելի վսեմ և խորիմաստ ժառանգորդության ավանդապահություն: Մեզանում նոր սերնդի հետ կապված շատ են հոռետեսական կանխատեսումները, որ մեր երիտասարդ սերունդն աստիճանաբար հեռանում է արմատներից: Երկար չարժե փիլիսոփայել: Կոմիտասի 140՝ - ամյակին նվիրված սեպտեմբերի 4-ի համերգը Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում, երբ ունկնդիրներին իր հոգեզմայլ երգով գերեց Հասմիկ Հարությունյանը և նրա հետ հանդես եկող Շողակն անսամբլը, ամեն ինչի պատասխանը տվեց: Դահլիճը լեփ լեցուն էր բոլոր տարիքների ունկնդիրներով, որոնցում հատկապես աչքի էին ընկնում երիտասարդ տղաներն ու աղջիկները: Ապրելով Երևանի այն թաղամասում, որը «Մեր թաղը» Հ1 հեռուստաշարում ես անվանեցի Երևանի Մոնմարտր, փոքր տարիքից անկախ իմ ընտրած մասնագիտությունից, ինձ

ստիպեց հաղորդակից լինել հայ մշակույթի հետպատերազմյան շրջանի կայացման բոլոր փուլերին, ներկա լինել Վարազդատ Հարությունյանի, Ռաֆայել Իսրայելյանի, Արա Սարգսյանի ընտանիքներում հավաքվող մտավորականների ծավալած թեժ բանավեճերին: Սկզբում ճաշակում էի Օլգա տատիկի (Հովհաննես Թումանյանի այրին) Սուրբ Մարիամ Աստվածածնի տոների մատաղների հյուրասիրությունները, իսկ հետո արդեն իբրև լրագրող և գրքահրատարակիչ ուժերիս ներածի չափով օգնում էի այս սուրբ նվիրյալների ազգանվեր իրականացումներին: Այդ տարիներին էր, որ լավ հասկացա կեղծ ավանդապաշտների միանգամայն անհեթեթ պնդումները, թե իբր նրանք երդվյալ ավանդապահ ժառանգորդներն են: Կարելի է օրինակների վրա ցուցադրել այդ տարբերությունները: Պատմական Հայաստանի բնակության համար օգտագործված հողատարածքների մեծ մասը լեռնային կիսաանապատային գոտում են: Մեր պապերը կառուցել են հաստ պատերով, նեղ պատուհաններով տներ ու շինություններ: Դրանով լուծվել են մի քանի կարևորագույն հարցեր.ցուրտ ձմռանը համեստ ջեռուցման պայմաններում կոմֆորտ կենսապայմաններ, ամռանն էլ նույն պայմաններով զով կացարաններ, մնում է լուծել կացարանների լուսավորության հիմնահարցը: Զվարթնոցի և Դվինի երթիկավոր դահլիճները (վերակազմությունը Վ.Հարությունյանի) հենց դա են ապացուցում: Հիմա պատկերացնենք, եթե այսօրվա նախագծողները որդեգրեն այս ամենը, մեր այս պայմաններում կարելի է մի երկու հիդրոկայանի արտադրած էլեկտրաէներգիա խնայել: Արևմուտքի ստեղծած արհեստական պահանջարկը՝ ապակի, կոնդենցիոներ և հուժկու ջեռուցման համակարգեր իրոք անհարիր են ավանդապահ ճարտարապետությանը: Ես հակում չունեմ պնդելու, որ այս ամենը վերջին երկու տասնամյակների ձեռքբերումներն են: Այս ամենին սկսեցին տուրք տալ 70- ական թվականներից: Ոմանց կարող է գրածներս անհեթեթ թվալ, սակայն 1980 թվականին Դամասկոսում շահագործման հանձնված ամերիկյան բարձրաբերձ հյուրանոցը ճիշտ իմ նկարագրածի պես էր կառուցված: Թուրքերի գրաված մեր պատմական Հայաստանի քաղաքներում, հիմնականում նեղ փողոցներում, անձրևաջրերն ու ձնհալի ջրերն հեռացվում են փողոցի մեջտեղում գցված ջրահեռացման համակարգով փակ կամ բաց առվակով: Դա ունի իր առավելությունը, քանի որ այդ դեպքում ջրերը չեն

>5

ԺԱՌԱՆԳՈՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԸ

>4 լցվում տան հիմքերի տակ: Մեզանում նույնիսկ առանց մայթի փողոցներում ջրահեռացման առվակները երկու կողմից են ու հարակից տների հիմքերը միշտ թաց են և մամռակալած: Ահա ձեզ ավանդապահ ժառանգորդության երկու օրինակ, որոնք մինչև օրս չեն արժանացել մեր նախագծողների կողմից կյանքի կոչման բախտին:

Այսօր էլ դեռևս շարունակվում է հնի ու նորի պայքարը մեր արվեստում և ճարտարապետությունում: Երվանդ Քոչարը հասավ նրան, որ Սասունցի Դավթի հետևի ոտքերի վրա հենված Քուռկիկ Ջալալիից հետո ստեղծեց օդում ճախրող Վարդան Մամիկոնյանի ձին: Արա Շիրազը Զորավար Անդրանիկին նստեցրեց երկու ձիերի վրա: Տեսնենք ինչ բախտի կարժանանա գրահատանկային զորքերի մարշալ Բաբաջանյանը: Այս հարցում կարծում եմ, որ ինչ էլ ստեղծեն, կլինի նորարարություն: Ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանը թամանյանական ավանդապահ դպրոցի ներկայացուցիչների ու նորարարների խմբի (Կարո Հալաբյան, Միքայել Մազմանյան, Գևորգ Քոչար), որոնք ԲՈՒՀ-ն Մոսկվայում ավարտելուց հետո եկել էին Երևան, գաղափարական պայքարն տարալուծվեց այս բոլորի կենսագրություններում, դրա համար այսօրվա ճարտարապետները մի քիչ այլ կերպ են պատկերացնում: Մի հանգամանք ևս, փաստորեն միայն նորարարներն ճաշակեցին ստալինյան բռնաճնշումների ողջ բարեմասնությունները, բացառությամբ Կարո Հալաբյանի: Որդիս՝ Մարտինը, այն փոքրաքանակ հայերից է, որ առանց բռնադատվելու գործուղման հովերով հայտվեց Նորիլսկի մարզային թանգարանում: Այդտեղ հարուստ նյութերով ներկայացված են մեր հայրենակից նորարար ճարտարապետներ Միքայել Մազմանյանի ու Գևորգ Քոչարի բազմաբեղուն գործունեությունն ու ավանդը հյուսիսային բևեռային շրջանից ավելի հյուսիս ստեղծված Դուդինկա և Նորիլսկ քաղաքների կայացման վիթխարի աշխատանքում:

Կարո Հալաբյանը, իրոք, որ ժրաջան ու եռանդուն, տաղանդավոր հայորդի էր, Գյանջայում ծնված: Ժամանակին այնքան էր տարված Մայակովսկու պոեզիայով ու նորարարություններով, որ նորաստեղծ Արմենպրեսում աշխատելիս ստեղծեց հայկական "Окна Роста":

Այսօր հասունացել է ժամը ընթերցողներին հարցում ուղղելու: 20-րդ դարն ավարտվեց ում հաղթանակով. թամանյանականների, թե հալաբյանականների, մազմանյանականների ու քոչարականների: Ընթերցողն այստեղ կարող է մեծ դադար տալ հոդվածն կարդալուն՝ մեկ ժամ, մեկ օր, մեկ շաբաթ կամ մեկ ամիս: Այնուհետև կհամաձայնի ինձ հետ՝ հաղթեցին հալաբյանականները, առանց անգամ գիտակցելու, որ այսօր ակտիվ գործող ճարտարապետների մեծ մասն այդ ուղության գործոն մասնակիցներն են: Թամանյանականների հուշ դարձած գործունեության հետ կարող եք ծանոթանալ կառավարական շենք # 3-ի աջ կողմում, եթե դեմքով կանգնենք դեպի շինության ֆասադը: Ըստ իս, այդ շենքի ձախ կողմի թանգարանում էլ հիմնականում հալաբյանական գործի շարունակողներն են: Ակամայից հիշողությանս մեջ հառնում է քանդակագործ Էռնստ Նեիզվեսնիի ստեղծած Նիկիտա Խրուշչյովի մահարձանը Մոսկվայի Նովոդևիչե գերեզմանոցում, որի պատվանդանի մի մասը սև մարմարից է, իսկ մյուսը սպիտակ:

Այս ամենի ֆոնի վրա հողին հանձվեց մի երդվյալ թամանյանական, որն իր ողջ էությամբ, իր բոլոր բջիջներով իրոք պայքարում էր հայ ճարտարապետության ու մշակույթի ժառանգորդության համար: Դա դյուրին չէր, բայց նա դա իրականացրեց :

Դուք կարծում եք իր համար դյուրին էր «Հայ ճարտարապետության պատմություն» դասագիրք ստեղծելը: Ուղղակի նրան ժամանակն ու պատեհությունը ձեռքից բռնեց ու կարգադրեց. ստեղծիր, հիմա քո հերթն է: Այդ դասագիրքը փորձել են ստեղծել Թորոս Թորամանյանը, Նիկոլայ Տոկարսկին, Ստեփան Մնացականյանը, Հրայր Իսաբեկյանը: Միայն Վարազդատ Հարությունյանի ստեղծածն կյանք մտավ, չնայած մեծագույն բարդություններին, որոնք առաջացան իշխանությունների փլուզման պատճառով: Արդեն շուրջ 17 տարի է, որ ճարտարապետության մասնագիտության ուսանողներն օգտվում են այդ դասագրքից:

Չնայած բազում հավաստիացումներին ու խոստումներին հորս հիշատակն հավերժացնելու ոչ մի կոնկրետ փորձ դեռևս չի արված: Այդ կապակցությամբ թերթի միջոցով դիմում եմ հանրապետության հանրությանն ու նրա Նախագահին, հարգարժան Սերժ Սարգսյանին, մի առաջարկով, եկեք սահմանենք ՀՀ շքանշան «Ժառանգորդության Ջատագով» անվամբ, որով կպարգևատրվեն Նախագահի հրամանագրով բոլոր նրանք, ովքեր իրենց ասպարեզում հետևողականորեն կիրականացնեն ավանդապահ ժառանգորդությունը: Կպարգևատրվեն կոմպոզիտորն ու գրողը, ճարտարապետն ու գեղանկարիչը, քանդակագործն ու հագուստի նորաձևության մասնագետը, ուսուցիչն ու խոհարարը, պատմաբանն ու լեզվաբանը:

· Վերջում մեր տան հարազատներին, բարեկամներին ու լայն հասարակայնությանը հուզող մի հարցի պարզաբանում: Շատերին մնաց անհասկանալի, թե ինչու ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանի աճյունը հողին հանձնվեց ոչ թե հանրապետական պանթեոնում, այլ Թոխմախի ընտանեկան գերեզմանոցում: Ոչ մի բան ես չէի կարող ինքնակամ իրականացնել, բոլորն էլ կատարվել է ավանդապահ ժառանգորդության կարգախոսով: Հորս կամքն էր, որպեսզի քաղաքացիական հոգեհանգիստն ու իր դեպի հավերժություն ճամփորդությունը կատարվի ՀՀ ճարտարապետների Միության տանից, որտեղ որոշ գործընկերների կարծիքով հասուն տարիքում ավելի շատ ժամանակ էր անցկացրել, քան իր սեփական տանը: Ինչո՞ւ ընտանեկան գերեղմանոցում: 2008 թվականի փետրվարյան մի արևոտ օր, այն բանից հետո, երբ հրաժեշտ տվեցի Մոսկվայից այցելության եկած որդուս (նա փութաց Երևան, երբ պարզ դարձավ, որ պապն աստիճանաբար հանգչում է) վերցրեցի լուսանկարչական գործիքն ու այցելության գնացի հանրապետական պանթեոն, որպեսզի ինձ համար պարզեմ մեկ հարց: Մեր ազգի մեծերից որքանն են, որ այդտեղ զետեղվել են իրենց կյանքի ընկերների՝ իրենց տիկնանց հետ: Պարզվեց, որ ընդամենը երեքն են, մնացածները մենակ են, մի քանիսի կանայք էլ դեռ ապրում են՝ Աստված նրանց երկար կյանք թող պարգևի:

Հայրս այս բառերն ինձ չի ասել, սակայն որդուս տեսնելուն պես, փետրվարյան այցելության ժամանակ, ասաց, որ հայրիկի հետ այցելեք տատիկի շիրիմին ու կարգի բերեք:

1965 թվականի ապրիլին մնացել էր շատ քիչ ժամանակ, երբ Ամենայն Հայոց գահակալ Վազգեն Ա Կաթողիկոսը հանձնարարեց ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանին Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հարակից տարածքում նախագծել ու կառուցել Արևելյան Հայաստանի տարածքում Հայկական Եղեռնի 50-ամյակը խորհրդանշող առաջին հուշարձանը: Այդ նույն ժամանակահատվածում հայրիկս իր վախճանված մոր և զոքանչի տապանաքարերը պատրաստեց ու տեղադրեց, դրանց դիմաց զետեղելով մի ստելա (Արևելյան Հայաստանի պատմության մեջ ընտանեկան գերեզմանոցի առաջին Եղեռնի հուշարձանը): Այդ ստելայի վրա փորագրվեցին հետևյալ բառերը. «Իմ անշիրիմ մնացած հարազատներիս հիշատակին...» թվարկելով անունները: Ցավոք սուղ ֆինանսական պայմանների պատճառով քարը փոքր էր և փորագրվեցին անունների միայն մի մասը: Բազում անգամներ եմ այցելել այդ գերեզմանոցն ու ամեն այցելությանն արտասվելով կարդում եմ անունները: Ծնվեցի Երևանում, վանեցի ծնողների ընտանիքում և քանի ապրում եմ, երբեք չեմ մոռանալու հայ դատի պահանջատիրությունը: Ոչ միայն խոսքով, այլ նաև գործով.

www.armenocide.am

1.CD- Armenian Genocide

2. CD- 1915 – 2005 Armenian Genocide 90

Այսինքն ստեղծել եմ Ինտերնետ կայք նվիրված Ցեղասպանությանը և հայ պատմագրության առաջին լազերային խտասալիկը, որին հաջորդեց երկրորդը:

«Գիտության» հարգելի ընթերցող, կարծում եմ, որ ժամանակ առ ժամանակ կարող է պատահել, որ կարոտեք ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանի խորիմաստ զրույցները մեր իրականության տարբեր հարցերի հետ առնչված: Այդպիսի հնարավորություն Ձեզ համար ստեղծված է և դա իմ ստեղծած Ինտերնետ կայքն է, որտեղ կարելի է ունկնդրել նաև նրա երգերի կատարումները.

www.architectacademic.org

Յուրաքանչյուր զավակ պետք է սիրի իր ծնողներին, կարող է պատահել, որ ինչ որ հանգամանքներ խանգարում են այն իրականացնելու համար: Փույթ չէ, գոնե հարգեք, չէ որ դուք Ձեր գենետիկ կոդով կրկնում եք նրանց լավ և վատ հատկանիշները: Լավը մեծացրեք, ընդարձակեք, վատն արմատախիլ արեք ու ձեր մեջ խեղդեք: Ահա սա էլ կլինի ժառանգորդության իմ հոր վերջին պատգամը:

Ռաֆայել ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Որդին մեծ վանեցու ու նվիրյալ հայի

Օգտակար լինել հայրենի գիտությանը

>3 տանի գիտությանն օգտակար լինելու համար, նորից ու նորից համոզվում եմ, թե որքան ճիշտ էր 2008-ին սփյուռքում ապրող գիտնականների մեծ խմբի ԳԱԱ արտասահմանյան անդամ ընտրելը: Եթե նրանցից կեսն էլ այնքան նպաստ բերի հայ գիտության զարգացմանը, արդյունքը անպայման շոշափելի կլինի:

Դիպվածը, որի մասին նշեցինք սկզբում, եզակի չէ: Երիտասարդ մասնագետներին Եվրոպայի առաջատար գիտական կենտրոններում կազմակերպվող դասընթացներին մասնակից դարձնելը Ֆելիքս Ահարոնյանի մշտական հոգսերից մեկն է: Ավելին, նա պարբերաբար տեղեկացնում է ԳԱԱ հաստատությունների առաջիկայում նախաձեռնվող դասընթացներին երիտասարդ մասնագետներ ուղարկելու մասին: Մանավանդ, որ դրանց ֆինանսավորումը հոգում է մյուս կողմը:

Ֆելիքս Ահարոնյանը Հայաստանի կառավարության կողմից ստեղծված Երևանի ֆիզիկայի ինստիտուտի զարգացման հանձնաժողովի անդամ է: Ռելյատիվիստիկ աստղային ֆիզիկայի Իտալիայի կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի ստեղծման մասին համաձայնագիր է կնքված մասնագետների պատրաստման և փոխանակման մասին. Ֆելիքս Ահարոնյանը ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչն է այդ կենտրոնում և մեծ աշխատանք է կատարում կենտրոնի համար մասնագետներ պատրաստելու ուղղությամբ: Ինչպես հայտնի է ՀՀ ԳԱԱ «Գալակտիկա» ՓԲԸ- շահել է գամմա-աստղադիտակների հայելիների պատրաստման մրցույթում: Եվ Ֆելիքս Ահարոնյանը այս գործում էլ բերել է իր աջակցությունը:

Նա ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում մեկ ասպիրանտի համաղեկավարներից մեկն է:

Ֆելիքս Ահարոնյանը իր արձակուրդն անց է կացնում Երևանում և հաճախ է այցելում Գիտությունների ակադեմիա՝ քննարկելու, որոշելու առաջիկա անելիքները:

Այսօր Ֆելիքս Ահարոնյանը կրում է Գերմանիայի Բարձր էներգիաների աստղաֆիզիկայի կենտրոնի գիտական խորհրդատուի բարձր կոչումը, հետազոտական խմբեր է ղեկավարում Մաքս Պլանկի միջուկային ֆիզիկայի ինստիտուտում և Դուբլինի համալսարանում (Իռլանդիա): Նրա սաների մասնագիտացումը բարձր էներգիաների աստղաֆիզիկան է: Զեկուցումներով հանդես է եկել բազմաթիվ միջազգային գիտաժողովներում, կոլոքիումներ է վարում այնպիսի հռչակավոր հաստատություններում, ինչպիսիք են Հարվարդը, Կալիֆոռնիայի տեխնոլոգիական ինստիտուտը, Պրինստոնը, Կոլումբիա համալսարանը:

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ֆելիքս Ահարոնյանը միջազգային հեղինակություն նվաճած գիտնական է, երկու համալսարանական արու զավակների հայր, հեռու արտասահմանում շարունակում է մնալ հայ և, որ ամենակարևորն է, մեծ եռանդով, սիրով ամեն կերպ աշխատում է օգտակար լինել հայրենի գիտության զարգացմանը: Որովհետև գտնում է, որ յուրաքանչյուր հայ՝ լինի Հայաստանում, թե արտասահմանում, պարտավոր է օգտակար լինել հայրենի գիտությանը:

«...Մարդու ամենամեծ երջանկությունը իր ժողովրդին ծառայելն է»

Գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Հր. Բատիկյանի ծննդյան 100-ամյակի առթիվ

Լրացավ վաստակաշատ կենսաբան և մանկավարժ, գիտության անխոնջ կազմակերպիչ, գիտության վաստակավոր գործիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ԵՊՀ նախկին ռեկտոր Հրանտ Բատիկյանի ծննդյան 100-ամյակը:

1930-ականներին գիտության ասպարեզ իջավ նորբայազետցի գիտնականների մի փայլուն սերունդ՝ Սամվել Քոչարյանց, Հրաչյա Բունիաթյան, Հրանտ Բատիկյան, Ավետիք Բուռնազյան, Իվան Գևորգյան, Վազգեն Սարուխանյան և ուրիշներ, որոնք առաջատար դեր խաղացին հայրենական գիտության տարբեր բնագավառներում, մեծ ճանաչում գտնելով ոչ միայն մեր երկրում: Գիտնականների այդ սերնդի մեջ Հրանտ Բատիկյանն ուրույն տեղ ունի:

Ծնվելով ու դաստիարակվելով ժամանակի բարեկիրթ, ազատական հայացքներով ուսուցչի ընտանիքում, Հրանտ Բատիկյանը դեռևս մանկուց հաղորդակից դարձավ հայ առաջավոր մշակույթի, գրականության ու գիտության լավագույն ավանդույթներին:

Օրինակելի ու բազմաբովանդակ կյանքի ուղի է անցել պրոֆեսոր Հր. Բատիկյանը: Ծնվել է 1909-ի դեկտեմբերի 26-ին: Ընդունվելով Երևանի նորաստեղծ պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը, փայլուն առաջադիմությամբ այն ավարտում է 1930-ին և ընդունվում Լենինգրադի Համամիութենական բուսաբուծության ինստիտուտի ասպիրանտուրա, որտեղ նրա ղեկավարն էր պրոֆեսոր Գ. Կարպեչենկոն (համաշխարային հռչակ ձեռք բերած գիտնական բույսերի հեռավոր հիբրիդացման ասպարեզում): Անցնելով ռուսական դասական կենսաբանության ու գենետիկայի փայլուն դպրոցը, որի ակնառու ներկայացուցիչներն էին Ն. Վավիլովը, Գ. Կարպեչենկոն, Գ. Լեվիտսկին, Հր. Բատիկյանն ավարտում է ասպիրանտուրան, պաշտպանում ատենախոսություն և ստանում գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Նրա աշխատանքը նվիրված էր ռենտգենյան ճառագայթների ներգործությամբ բույսերի քրոմոսոմներում դիտվող մուտագեն փոփոխություններին: Այդ շրջանում նրա աշխատանքներն արժանանում են ակադեմիկոսներ Ն. Վավիլովի և Մ. Թումանյանի բարձր գնահատականին:

1939-ին Հր. Բատիկյանը հրավիրվում է Երևան և ակադեմիկոս Հովսեփ Օրբելու հետ ձեռնամուխ լինում ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի (Արմֆանի) կազմակերպմանը: Սկզբում նա մասնաճյուղի գիտական քարտուղարն էր, իսկ 1941-42-ին՝ նախագահության նախագահի տեղակալ: Այդ տարիներին, կողք-կողքի աշխատելով հայ մշակույթի նշանավոր երախտավոր, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու հետ և նրա ղեկավարությամբ, Բատիկյանը կոփվում է, դաստիարակվում մեր ժողովրդի լավագույն ավանդույթներով, որոնք բյուրեղացած էին Օրբելու մեջ, որպես հռչակավոր գիտնականի, մեծ հայրենասերի, քաղաքացու և մարդու: Այդ տարիներին եռանդուն գործունեություն էր ծավալվել Հայաստանում նոր ինստիտուտների կազմակերպման, գիտական աշխատությունների հրատարակման, ազգային գիտական կադրեր պատրաստելու, գիտության նյութա-տեխնիկական հենքն ամրապնդելու համար: Այդ գործում քիչ չէին նաև Հր. Բատիկյանի ծառայությունները:

Հրանտ Բատիկյանի կյանքի, գիտամանկավարժական գործունեության լավագույն տարիներն անցել են Երևանի պետական համալսարանում: Վաստակաշատ գիտնականը, գիտության ու բարձրագույն կրթության հմուտ կազմակերպիչը խոր ու լուսավոր հետք է թողել մայր բուհի պատմության մեջ: Նա սիրված ու հարգված մարդ էր և՛ ուսանողների, և՛ գործընկերների կողմից: Գիտակազմակերպական աշխատանքին զուգընթաց Հր. Բատիկյանը դասախոսություններ է կարդում ԵՊՀ-ում և գյուղատնտեսական ինստիտուտում Չ. Դարվինի տեսության, կենսաբանության և, հատկապես, գենետիկայի բնագավառի մի շարք խնդիրների վերաբերյալ: Եռանդուն մասնակցություն է բերում ԵՊՀ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի հիմնադրմանը և 1950-ից մինչև կյանքի վերջն այդ ամբիոնի վարիչն էր: Մինչև 1957թ. նա միաժամանակ ղեկավարում էր ԳԱ գենետիկայի ինստիտուտի բույսերի հիբրիդացման բաժինը: Այդ շրջանում նրա գիտական աշխատանքները նվիրված էին բույսերի սեռական և վեգետատիվ հիբրիդների ժառանգական հատկանիշների ձևավորմանը, քրոմոսոմային հավաքակազմում դիտվող փոփոխություններին և ժառանգման մեջ բջջային տարբեր բաղադրամասերի դերի պարզաբանմանը:

Գրեթե 30 տարի Հր. Բատիկյանը ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետի դեկանն էր: Այդ տարիներին նոր ուժով դրսևորվեցին նրա կազմակերպական տաղանդն ու եռանդը: Նրա ջանքերով ստեղծվեցին կենսաքիմիայի, հողագիտության, ագրոքիմիայի, կենսաֆիզիկայի ամբիոնները, որոնք ժամանակակից կենսաբանության մի շարք նոր ուղղությունների գծով որակյալ կադրեր պատրաստելու հնարավորություն ընձեռեցին:

Պրոֆեսոր Բատիկյանի սաները սիրով էին հաճախում նրա դասախոսություններին, որոնք աչքի էին ընկնում հագեցվածությամբ, դասական դարձած գիտելիքները նորի, վիճելիի հետ շաղկապվածությամբ:

1963-66-ին Հր. Բատիկյանը ԵՊՀ ռեկտորն էր: Նա մեծ ջանքեր է ներդնում համալսարանում նոր գիտական ուղղությունների զարգացման համար: Բացվում են նոր ամբիոններ և գիտական լաբորատորիաներ: Պետք է դրվատանքով նշել նաև նրա ծառայությունները համալսարանի նոր շենքի շինարարության գործում:

Հաշվի առնելով Հր. Բատիկյանի գիտական ծառայությունը, 1961-ին նրան շնորհվում է գիտության վաստակավոր գործչի կոչում: Նրա գրչին են պատկանում ավելի քան 200 գիտական աշխատություններ, այդ թվում՝ մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ և բազմաթիվ հանրամատչելի գրքեր ու հոդվածներ: Մեծ է Հր. Բատիկյանի վաստակը նաև գիտական կադրեր պատրաստելու գործում: Նրա անմիջական ղեկավարությամբ պաշտպանվել են 40-ից ավելի ատենախոսություններ, որոնք նվիրված էին ժամանակակից գենետիկայի և սելեկցիայի հրատապ խնդիրներին:

Բեղուն ու արգասաբեր է եղել նաև պրոֆեսոր Հր. Բատիկյանի գիտահասարակական գործունեությունը: 1938-41-ին նա ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի «Տեղեկագրի» գլխավոր խմբագիրն էր: Ավելի քան 25 տարի նա ակադեմիայի «Հայաստանի կենսաբանական հանդեսի» գլխավոր խմբագիրն էր: Գործուն մասնակցություն է ունեցել «Գիտելիք» ընկերության աշխատանքներին, երկար տարիներ եղել է ընկերության նախագահության անդամ: Արժանացել էր կառավարական մի շարք պարգևների:

1976-ից պրոֆեսոր Հր. Բատիկյանը Ն. Վավիլովի անվան գենետիկների և սելեկցիոներների համամիութենական ընկերության հայկական բաժանմունքի նախագահն էր: Չնայած տարիքին, երիտասարդական ավյունով էր ձեռնամուխ եղել Հայաստանում գիտության այդ կարևոր բնագավառի զարգացման գործի կազմակերպմանը: Կյանքի վերջին տարիներին Հր. Բատիկյանը կարևոր գիտական և կազմակերպական աշխատանք էր կատարում Երևանում կենսոլորտի մաքրության, օրգանիզմների գենետիկական առանձնահատկությունների վրա կենսոլորտի վնասակար ներգործության ուսումնասիրության բնագավառում: Նա գիտության և տեխնիկայի պետական կոմիտեին առընթեր «Մարդը և կենսոլորտը» խորհրդի անդամ էր:

Այսօր Հրանտ Բատիկյանը մեզ հետ չէ: Բայց նրա հիշատակն ապրում է նրա բազմահազար սաների սրտում: Մենք երբեմն հարցնում էինք նրան՝ ո՞րն է մարդու ամենամեծ երջանկությունը: Պատասխանը միանշանակ էր՝ «Իր ժողովրդի հետ լինելը, նրա ուրախությամբ ուրախանալը և դժվարություններով ապրելը, նրան ծառայելը, անունն ու պատիվը բարձր պահելը. ես հայ ժողովրդի զավակն եմ, նրա խոնարհ ծառան»: Լավ է ասված, շատ ուսանելի մեր երիտասարդության համար: Պրոֆեսոր Հր. Բատիկյանը իր ամբողջ գործունեության ընթացքում սաներին դաստիարակել է այդ ոգով:

Հրանտ Բատիկյանը մահացավ 1983-ի մարտի 31-ին՝ թողնելով գիտնականին վայել գործ ու բարի անուն:

Էմիլ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Արմեն ՍԻՄՈՆՅԱՆ
Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Շրջակա միջավայրին առնչվող հարցերին հասարակության մասնակցության իրավունքը

Բնապահպանական քաղաքականությունը ձևավորվում է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային պայմանագրերի պահանջների համաձայն: Այսօր ՀՀ անդամակցում է մի շարք միջազգային կոնվենցիաների, ինչպես օրինակ «Շրջակա միջավայրին առնչվող հարցերով տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի Կոնվենցիային, որին ՀՀ միացել է 1998 թ.: Կոնվենցիայում կարևորվում է շրջակա միջավայրին առնչվող հարցերում տեղեկատվության հասանելիության և որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության ապահովումը: Կոնվենցիայի դրույթների համաձայն պետական մարմինները ի պատասխան էկոլոգիական տեղեկատվություն տրամադրելու խնդրանքի, ազգային օրենսդրության շրջանակներում, հասարակությանը տրամադրում են այդպիսի տեղեկատվություն: Տեղեկատվությունը տրամադրվում է առավելագույնը սեղմ ժամկետներում, սակայն ոչ ուշ քան խնդրանքը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Վերջինս էլ, տեղեկատվության ծավալից և բարդությունից ելնելով, կարող է երկարաձգվել մինչև 2 ամիս: Միաժամանակ պետք է նշել, որ էկոլոգիական տեղեկատվությունը տրամադրելու խնդրանքը կարող է մերժվել, եթե պետական մարմինը չի տիրապետում այդ տեղեկատվությունը, խնդրանքը բացահայտ անհիմն է, կամ կարող է բացասաբար անդրադառնալ պետական մարմինների աշխատանքի գաղտնիության, միջազգային հարաբերությունների, ազգային պաշտպանության կամ պետական անվտանգության վրա: Կոնվենցիայում նշվում է այն դեպքերը, երբ պետական մարմինը չի տիրապետում պահանջվող էկոլոգիական տեղեկատվությանը: Այս պարագայում այդ պետական մարմինը դիմում է այն մարմնին, որը կարող է տրամադրել այդ տեղեկատվությունը:

Կոնվենցիայով կարևորվում է նաև շրջակա միջավայրին առնչվող հարցերով հասարակության մասնակցությունը: Հասարակության մասնակցությամբ ընթացակարգերը թույլ են տալիս գրավոր տեսքով կամ հանրային լսումների միջոցով հարցի դիտարկման ընթացքում ներկայացնել ցանկացած դիտողություն, տեղեկատվություն, վերլուծություն կամ կարծիք, որոնք ըստ նրա, առնչություն ունեն պլանավորվող գործունեությանը: Վերջինիս կապակցությամբ ընդունված որոշման մեջ պատշաճ կերպով պետք է արտացոլված լինի հասարակության մասնակցության արդյունքները, իսկ պետական մարմնի կողմից որոշումն ընդունելուց հետո, պատշաճ ընթացակարգերով պետք է անհապաղ իրազեկվի այդ որոշման մասին, այսինքն՝ հասարակությանը տրամադրվում է որոշման տեքստը՝ նշելով այդ որոշման հիմք հանդիսացող պատճառներն ու նկատառումները: Փաստորեն Օրհուսի Կոնվենցիայով ապահովվում է տեղեկատվության մատչելիությունը, և իրավունք է վերապահում հասարակությանը մասնակցելու շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվող և իրականացվող գործողություններին:

Այսպիսով, Օրհուսի Կոնվենցիան սահմանում է ոչ միայն էկոլոգիական իրավունքը, որպես մարդու իրավունքների բաղկացուցիչ մաս, այլև տեղեկատվության հասանելիության կարևորությունը, որը պայմանավորում է հասարակության մասնակցությունը որոշումների ընդունման և դրանց իրականացման գործընթացներին:



Արաքսյա ՄՈՒՐԱԴՅԱՆ
«Սպառողների Ասոցիացիա»-ի իրավաբան

Բերանն արնոտ մարդակերը էն անբան
Հազար դարում հազիվ դարձավ մարդասպան,
Ձեռներն արնոտ դեռ գնում է նա կամկար,
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ



Ինքնանվիրումը քաղաքացու և գիտնականի

Պատմաբան Ռուբեն Սահակյանի ծննդյան 80-ամյակը



Լրացավ Թբիլիսիում ծնված, պատմաբան-միջազգայնագետի իր համալսարանական կրթությունը Երևանի պետհամալսարանում ստացած, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիուտի թուրքագիտության բաժինը տարիներով ղեկավարած, արգասաբեր կյանքի չորս տասնամյակը գիտությանը նվիրաբերած Ռուբեն Սահակյանի ծննդյան ութսունամյակը: Ճակատագրի քմայքով ցեղասպանագետի հոբելյանը դիմավորում ենք մարտահրավերներով լեփ-լեցուն մեր այսօրով:

1961 թ.-ին Ռուբեն Սահակյանը պաշտպանեց «Խորհրդային-թուրքական հարաբերությունները քսանհինգից երեսունհինգ թվականներին» թեմայով թեկնածուականը: Եղեռնի հիսունամյակից երկու տարի առաջ Երվանդ Սարգսյանի համահեղինակությամբ լույս տեսավ յոթ լեզվի տիրապետող հետազոտողի «Թուրք պատմաբանների աշխատություններում հայ ժողովրդի պատմության որոշ հարցերի նենգափոխման մասին» հոդվածը: 64-ին տպագրվեց «Խորհրդա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրքական պատմագիտության մեջ», 65-ին՝ «Հայ ժողովրդի նոր ժամանակների պատմության նենգափոխումը թուրքական պատմագրության մեջ» խորագրերը կրող, գիտական համարձակության յուրօրինակ խտացում մենագրությունները՝ հեղինակին չծերբազատելով տպագրություններին հաջորդող հավանական հետևանքներից: Աղմուկ բարձրացրած «Հայ ժողովրդի նոր ժամանակների պատմության նենգափոխումը թուրքական պատմագրության մեջ»-ը անգլերեն թարգմանվեց առանց հապաղումի և լույս տեսավ ԱՄՆ-ում: Որպես հետևանք գրաքննության նոր քմահաճույքի՝ մենագրությունից նպատակամիտված դուրս մնաց նրա «Հանուն ճշմարտության» հոդվածը: Հանիրավի ստվերվածը հաջողվեց շատ ավելի ուշ՝ 88-ին տպագրել: Կատարյալ գիտական խիզախության մեկ ուրիշ օրինակ էր ցեղասպանության հիսուներորդ տարելիցից ճիշտ մեկ տարի անց ընթերցողի դատին հանձնված «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի ժողովածուի հրատարակումը՝ կազմած Մկրտիչ Ներսիսյանի հետ: Իսկ պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի հետ կազմեցին, 72-ին էլ տասը հազար տպաքանակով հաջողվեց տպագրել «Հայաստանը միջազգային դիվանագիտության և խորհրդային արտաքին քաղաքականության փաստաթղթերում» հաջորդ ընդգրկուն ուսումնասիրությունը: «Նամակներ Զաբել Եսայանին՝ Կիլիկիայից», «Կոնֆերանս՝ Սան-Ռեմոյում», «Հայկական թուրքագիտությունը 1908-20 թվականներին», «Բոլշևիկները և Էնվեր փաշան» և պատմաբան-ցեղասպանագետ-միջազգայնագետի հեղինակած, այստեղ չհիշատակված բազում այլ երկեր եղել և շարունակում են մնալ ոչ միայն պատմագետ-պատմաբանների, մանկավարժների, այլև տարբեր մասնագիտություն ու նախասիրություն ունեցող ընթերցողների ամենալայն շրջանակների ուշադրության կենտրոնում:

1990 թ.-ին լույս տեսավ Ռուբեն Սահակյանի ցեղասպանագիտական տասնյակ ուսումնասիրություն ներառող «Ցեղասպանության պատմությունից» աշխատությունը՝ ութ հարյուր ծանոթագրությամբ: Ցեղասպանության ութսունամյա տարելիցի առիթով՝ 1995 թ.-ին, Քեմբրիջի հայագիտական հետազոտությունների և վավերագրերի Զորյան ինստիտուտի հովանավորությամբ Ռուբեն Սահակյանի ու Կոնստանտին Խուդավերդյանի համահեղինակությամբ լույս ընծայվեց Մեծ եղեռնը հնարավորինս համապարփակ ներկայացնող, ինչպես նաև տարելիցին պատշաճող մեկ այլ գիրք նա՝ «Հայերի ցեղասպանությունը՝ տասնամյակների պրիզմայով» խորագրով: Արգասաբեր դուրս եկան գիտական պրպտումները Ֆրանսիան և Հայոց ցեղասպանությունը թեմայի առնչակցություններում: Ամբողջացավ «Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 19-21 թվականներին» պատմագիտական ուսումնասիրությունը՝ տպագրվելով 70-ին, վերահրատարակվելով 86-ին, առաջինը՝ հայերեն, երկրորդը՝ ռուսերեն ու ընդլայնված ծավալով՝ 18-23-ն ընդգրկող ժամանակաշրջանի խելամիտ ներառմամբ, լրամշակված 900 ծանոթագրությամբ: Պատմաբանը չէր կարող մասնակցություն չունենալ «Հայկական հարց» հանրագիտարանի ստեղծման աշխատանքներին: Անդամակցեց խմբագրական խորհրդին՝ հեղինակելով հանրագիտարանում զետեղված բազում հոդվածներ:

Խնդրից դուրս համարելով գիտական ցանկի մանրակրկիտ ամբողջացումը՝ հպանցիկ անդրադառնամ Ֆրանսիայում ապրած տարիներին. 1975-81-ը նա Ֆրանսիայում Խորհրդային Միության դեսպանատան՝ հասարակական կազմակերպությունների հետ կապերի պատասխանատուն էր:

Փարիզում նա լայն գործունեություն ծավալեց հայ գաղութի բոլոր շրջանակներում, և դարձյալ նրա անկեղծությունն ու շիտակությունը մեծապես նպաստեցին ֆրանսահայ գաղութի միասնության, գաղութի բոլոր հատվածներին հայրենիքի շուրջ համախմբելու նրա ջանքերը և նոր շունչ ու ավյուն հաղորդելու այդ աշխատանքներին:

Նրա անմիջական ջանքերով 1975-ին հնարավոր եղավ Անդրանիկի մահվան հիսնամյա տարելիցը նշել «Գավո» համերգասրահում: Արդեն հիվանդ Արամ Խաչատրյանի մահճից Փարիզում նա չէր հեռանում, երկու տարի անց Ֆրանսիայի մայրաքաղաքում նշվեց հայազգի երգահանի հոբելյանը: 1980 թվականին իր պարտքը համարեց Մարտիրոս Սարյանի ծննդյան հարյուրամյակի պատշաճ կազմակերպումը: Քաջատեղյակ ֆրանսիացիներն ու ֆրանսահայերը մինչև օրս հիշում են, որ Լուվրում հայտնված տասներեքերորդ դարի հայկական խաչքարը Ռուբեն Սահակյան-միջազգայնագետի ճիգերի շնորհիվ բերվեց, տեղադրվեց... էլ չեմ խոսում Լուի Արագոնի, Ժան Էֆֆելի, Աիդա Ազնավուրի, Շառլ Ազնավուրի հայր Միշայի, Կարվարենցի, Փարիզում հյուրընկալված Վիլյամ Սարոյանի մասին... Մշակութային գերհագեցվածությամբ աչքի ընկնող ֆրանսիական տարիներին իրենց յուրահատուկ տեղն ունեին գեղանկարիչներ Գառզուն, Ժանսեմը, Ֆրանսիական ակադեմիայի պատվավոր անդամ Անրի Թրուայան, կինոբեմադրիչ Աշոտ Մալաքյան-Անրի Վեռնոյը: Հետազոտող պատմաբանն ինչպե՞ս կարող էր ապրել Ֆրանսիայում և ֆրանսահայ համայնքի պատմությունն աչքաթող անել: Այնպես որ տարիների ընթացքում ամբողջացավ անհրաժեշտ փաստաթղթերի մի շահեկան հավաքագրում ևս, ինչը, բնականաբար, իր էական արտացոլումը պիտի գտներ գալիք երկերում:

Ֆրանսիան հիշատակելիս խորհում եմ՝ դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի անդրադարձ կգտներ պատմաբանի հոգում մեր օրերում կատարվածը, եթե Փարիզի կենտրոնում ֆրանսահայերի ծեծկռտուքի մի ականատեսն էլ ինքը դառնար, այն էլ՝ այն ժողովրդավար երկրում, որն ընդունել է Հայոց ցեղասպանությանը... Ճիշտ այդպես հստակ երևակայելի է Ռոջեր Սմիթի, Ռոբերտ Մենենդեսի, Իվ Տերնոնի, մեր արդար դատին անդամագրված ու այդ դատին կյանք նվիրաբերած այլ հետազոտողների մտահոգություններին նրա ականջալուր լինելը...

Ֆրանսիայում վեց տարի ապրելուց և գործելուց հետո Ռուբեն Սահակյանը վերադարձավ Հայաստան և վերստին լծվեց աշխատանքի՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում ղեկավարելով նորագույն պատմության բաժինը, միաժամանակ նախագահելով ֆրանսիական մշակութային կենտրոն հանդիսացող «Հայաստան-Ֆրանսիա» ընկերությունը: Իր փայլուն աշխատանքի համար 94-ին նա արժանացավ Ֆրանսիայի կառավարական պարգևին՝ Palmes Academiques, բացառիկ պարգև, որ տրվում է գիտության և մշակույթի ասպարեզում աչքի ընկած գործիչներից երևելիներին:

Ռուբեն Սահակյանի ութսունամյակի օրն աններելի թերացում կլիներ մտահան անել ազգությամբ ռուս, ամուսնուց քայլ իսկ չհեռացած ու նրա հիշատակին հավատարիմ ապրող, Հայաստան ոտք դրած օրվանից մինչև օրս մայրաքաղաքի կրթօջախներում ինքնանվիրումով երաժիշտների սերունդներ կրթած նրա տիկնոջը, ում մեջ հայերի ու հայկականության, հայ ժողովրդի պատմության նկատմամբ սեր և հետաքրքրություն սերմանելու հարցում նույնպես պատմաբանը վճռորոշ դերակատարություն ունեցավ: Վալենտինան մինչև վերջ իր կողակցի գաղափարակիցն ու օգնականը մնաց՝ համոզված, որ մարդիկ չեն մեռնում, պարզապես հեռանում են: Մեռնում են, երբ ապրողներն են նրանց մոռանում:

Լարիսա ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐՄԵՆ ԹԱԽՏԱՋՅԱՆ



Նոյեմբերի 13-ին 99 տարեկան հասակում Սանկտ Պետերբուրգում կյանքից հեռացավ 20-րդ դարի խոշորագույն բուսաբաններից մեկը, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, Աշխատանքային կարմիր դրոշի, ժողովուրդների բարեկամության շքանշանների, «Անձնվեր աշխատանքի համար» և ՀՀ ԳԱԱ «Ոսկե» մեդալների, Սոցիալիստական աշխատանքի հերոս, Վ. Կոմարովի և Ռ. Ալերտոնի անվան մրցանակների, Հայաստանի Հանրապետության բարձրագույն պարգևի՝ Մեսրոպ Մաշտոցի շքանշանի դափնեկիր, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի և Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Ամերիկայի Միացյալ Նահանգների գիտությունների ակադեմիայի, Լոնդոնի Լինեյան ընկերության, Գերմանիայի Լեոպոլդինի անվան բնագետների, Լեհաստանի և Նորվեգիայի ակադեմիաների իսկական անդամ Արմեն Թախտաջյանը:

Արմեն Թախտաջյանը լրացնում է աշխարհի հռչակավոր բուսաբանների-էվոլյուցիոնիստնեփ համաստեղությունը: Նրա կողմից ստեղծված բուսական աշխարհի էվոլյուցիոն համակարգը ոչ միայն ընդունված է գիտական բուսաբանական հասարակության կողմից, այլ նաև համարվում է լավագույնը և ամենաարժանահավատը: Արմեն Թախտաջյանը մեծ ներդրում է ունեցել բուսական աշխարհի ժամանակակից գիտության գրեթե բոլոր հիմնական ուղղություններում: Երկար տարիներ նա զբաղեցրել է ԽՍՀՄ-ի Գիտությունների ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնը: Նրա կողմից ստեղծված Բուսաբանական դպրոցը մինչ օրս շարունակում է կյանքի կոչել Թախտաջյանի գաղափարները:

Արմեն Թախտաջյանը մեծ ներդրում է ունեցել Հայաստանում բուսաբանական գիտության զարգացման գործում: 1943-ից մինչև 1948 թվականը Արմեն Թախտաջյանը Հայաստանի Գիտությունների ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի տնօրենն էր: Լենինգրադ տեղափոխվելուց հետո նա շարունակեց սերտորեն համագործակցել հայաստանյան բուսաբանների հետ:

Թախտաջյանի շնորհիվ հայաստանյան բուսաբանական դպրոցը համարվում է առաջադեմ դպրոցներից մեկը: Մեծանուն գիտնականի աջակցությամբ Հայաստանում զարգացան բուսաբանական աշխարհի ժամանակակից գիտության այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են սիստեմատիկան, անատոմիան, պալինոլոգիան, կարիոլոգիան և այլն:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան և ողջ գիտական հասարակայնությունը, Թախտաջյանի աշակերտներն ու հետնորդները սգում են խոշորագույն գիտնականի, հավատարիմ քաղաքացու և մեծանուն մարդու անդառնալի կորուստը և իրենց խորին ցավակցությունն են հայտնում նրա հարազատներին ու մտերիմներին: Արմեն Թախտաջյանի աճյունը հողին կհանձնվի Սանկտ Պետերբուրգի Սմոլենսկի գերեզմանոցում:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Անչափ ողջունելի հրապարակում



Հազիվ թե մեր համակարգի գիտնականների պետք է բացատրել, թե ինչքան կարևոր և անհրաժեշտ է մատենագիտություն երևույթը: Հուրախություն մեզ, «Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրությունը իր ընթերցողին է ներկայացրել 1983-2007 թթ. մատենագիտականը՝ հանդեսի գլխավոր խմբագիր, ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի «Երկու խոսք» առաջաբանով.

«2008 թ. լրացավ ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես»-ի հիմնադրման 50 տարին: Այդ ընթացքում լույս են տեսել պարբերականի 176 համարներ, որոնք պարունակում են շուրջ 5000 տարբեր բնույթի նյութեր (հոդվածներ, հաղորդումներ, հրապարակումներ, գրախոսություններ և այլն):

Սույն մատենագիտությունը շարունակությունն է կազմում 1983 թ. հրատարակված՝ 1958-1982 թթ. մատենագիտական ցանկի և բաղկացած է երկու բաժիններից՝ առաջինում հրատարակված նյութերը տրվում են ըստ գիտությունների մասնաճյուղերի, իսկ երկրորդը՝ հեղինակների անվանացանկն է:

Հաշվի առնելով վերջին հիսնամյակում հայագիտության և հասարակագիտության մեջ կատարված որոշակի փոփոխությունները, խմբագրությունը որոշեց մատենագիտության մեջ առանձնացնել, մանրամասնել, նախկինի համեմատ որոշակի դարձնել պատմական և բանասիրական գիտաճյուղերի թվարկումը և դրա մեջ ներմուծել որոշ մասնագիտությունների անուններ, դիցուք՝ մշակութաբանություն, ձեռագրագիտություն, բնագրագիտություն, եկեղեցական գրականություն, կրոնի և եկեղեցու պատմություն և այլն:

Մատենագիտական ցանկից օգտվողներին անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը. 1. Մատենագիտական ցանկը տրվում է երեք լեզուներով՝ հայերեն (կազմող՝ Աղավնի Շահինյան), ռուսերեն (կազմող՝ Ռիտա Խաչատրյան), անգլերեն (կազմող՝ Նվարդ Զաքարյան): Իրենց օգտակար խորհուրդներով մատենագիտության կազմելուն նպաստել են նաև խմբագրության մյուս աշխատակիցները: 2. Պարբերականում ռուսերեն տպագրված հոդվածները մատենագիտական ցանկում վերնագրերից հետո ունեն նշում՝ ռուս.: 3. Եթե գրախոսվող գիրքը հայերեն չէ, ապա վերնագրից հետո ուղիղ փակագծերում նշվում է գրախոսվող գրքի լեզուն: 4. Եթե նյութի վերնագրի մեջ հարկ կա լրացուցիչ տեղեկությունների, ապա դրանք տրվում են ուղիղ փակագծերում: 5. Ուղիղ փակագծերում տրվում են նաև խորագրեր անվերնագիր նյութերի համար: 6. Անվանացանկում տրված են նաև վերնագրերում չարտացոլված այն անունները, որոնց վերաբերում է հոդվածը: 7. Կիրառվել են հետևյալ համառոտագրությունները՝ դից.-դիցաբանական, վիպ.- վիպական, աստվածաշնչ.- աստվածաշնչային»:

Վիկտոր Համբարձումյանի արձանը՝ Ղուկաս Ղուկասյանի արձանի տեղում

Երևանի Աբովյան փողոցի վրա գտնվող պետհամալսարանի շենքի դիմացի զբոսայգում, որտեղ գտնվում է նաև աստղադիտարանը, տեղադրվել է մեծահռչակ աստղաֆիզիկոս, տեսական աստղաֆիզիկայի խորհրդային դպրոցի հիմնադիր, ԽՍՀՄ և ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիաների ակադեմիկոս, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նախկին երկարամյա նախագահ Վիկտոր Համազասպի Համբարձումյանի (1908թ., Թբիլիսի-1996թ., Երևան, թաղված է Բյուրականում) արձանը. մոտ օրերս տեղի կունենա հանդիսավոր բացումը: Այն ունի 3 մ 20 սմ բարձրություն, և տեղադրված է 80-սմ-անոց պատվանդանի վրա:

Քանդակի հեղինակն է ճանաչված հայ արձանագործ, Երևանի Գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսոր Տարիել Հակոբյանը:

Ի դեպ, արձանը դրված է հեղափոխական-կուսակցական գործիչ Ղուկաս Ղուկասյանի (1899-1920թթ.)՝ նախկինում դրված արձանի տեղում:

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ.

«ՔԱՋԱԶԻ ՄՇՏԱՎԱՌ ԿԱՆԹԵՂԸ»

2009 թվականի ապրիլի 1-ից ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործում է սփյուռքահայ արվեստի բաժինը, որն իր կարճատև գործունեության ընթացքում արդեն շոշափելի արդյունքներ է արձանագրել: Բաժինը ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ հիմնարկել է «Ակնարկներ սփյուռքահայ կերպարվեստի պատմության» մատենաշարը, որի անդրանիկ հատորը՝ ամերիկահայ անվանի նկարիչ Քաջազի (Քաջազունի Քեչեճյան, 1924-2004) կյանքին և ստեղծագործական գործունեությանը նվիրված «Քաջազի մշտավառ կանթեղը» աշխատությունն է: Դեռևս 40 տարի առաջ էր, որ հայ ականավոր բանաստեղծ Երվանդ Քոչարն իր «Արվեստ՝ ազգային ոգու հավերժացման» հոդվածում գրեց. «Այո՛, Քաջազի մասին պետք է գրել մի խորը և բովանդակալից մենագրություն, որ գոնե մի փոքր բացահայտվի բովանդակալից այս նկարչի սիմվոլիկ էությունը...»: Եվ ահավասիկ ճիշտ չորս տասնամյակ անց ստեղծվում է այդ գիրքը. ճակատագրի նախախնամությամբ դրա հեղինակն է դառնում սրանից 10 տարի առաջ մեծն Քոչարի մասին գրքի հեղինակ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը:

Քաջազին նվիրված իր աշխատության մեջ Ա.Աղասյանն առաջին անգամ փաստական նյութի լայն ընդգրկմամբ, հանգամանորեն ներկայացրել է արվեստագետի երկարատև, փորձություններով լի, բայց և նշանակալից իրադարձություններով, հիշարժան դեպքերով ու երջանիկ հանդիպումներով հագեցած կենսագրությունը: Հեղինակը Քաջազի արվեստը մատուցել է ժամանակագրական հերթագայությամբ՝ ըստ շրջանների, և լուսաբանել տարբեր կողմերից: Հատկապես կարևորվում են նրա կտավներում արտացոլված թեմատիկ և կերպարային բովանդակության, ազգային մտածողության, գունային սուր ընկալումների, տեխնիկական յուրահատուկ կատարման հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք դիտարկվում են նկարչի բնորոշ աշխատանքների օրինակներով, դրանց մանրախույզ քննությամբ: Տեքստը՝ հայերեն բնագիրն ու անգլերեն թարգմանությունը, ուղեկցվում է սև-սպիտակ լուսանկարներով և Քաջազի լավագույն գործերի գունավոր վերարտադրություններով:

Գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ 2009 թվականի հոկտեմբերի 25-ին Երևանի Կամերային երաժշտության տանը: Բնականաբար՝ առաջին խոսքը ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանինն էր. նա ողջունեց ՀՀ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի ծնունդը, ջերմորեն շնորհավորեց գրքի հեղինակին և ՀՀ սփյուռքի նախարարության Պատվոգիրը հանձնեց նկարչի այրուն՝ Սաթենիկ Քեչեճյանին,որը մեծապես նպաստել էր գրքի հրատարակմանը:

Այնուհետև գրքի հեղինակ Ա.Աղասյանը համառոտ ու ամփոփ ներկայացրեց իր աշխատությունը: Սաթենիկ Քեչեճյանը, որը խիստ հուզված էր թե՛ գրքի տեղծմամբ, թե՛ նման հոյակապ շնորհանդեսի կազմակերպման պատճառով՝ իր երախտագիտությունը հայտնեց գրքի հեղինակ Արարատ Աղասյանին, ՀՀ սփյուռքի նախարար տիկին Հրանուշ Հակոբյանին, բոլոր ներկաներին, ովքեր եկել էին կիսելու իր ուրախությունը: Ողջույնի խոսքեր ասացին Շահեն Խաչատրյանը և Էմանվել Մանուկյանը, ովքեր անձամբ ճանաչել են նկարիչ Քաջազին և վայելել նրա բարեկամությունը:

Այնուհետև Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը Խորհրդային Միության և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, Խորհրդային Միության և ՀԽՍՀ Պետական մրցանակների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ և ՀՀ սփյուռքի նախարարության ատյանի անդամ, Երևանի պատվավոր քաղաքացի Հովհաննես Չեբիջյանի ղեկավարությամբ հանդես եկավ կոմիտասյան խմբերգերի փայլուն կատարմամբ: Ծրագրի ընտրությունը պատահական չէր. մի կողմից շնորհանդեսը Կոմիտասի ծննդյան 140-ամյակի նախօրյակին էր, իսկ մյուս կողմից՝ Քաջազն իր ստեղծագործության մեջ քանիցս անդրադարձել է Կոմիտասի կերպարին:

Հավարտ «Քաջազի մշտավառ կանթեղը» գրքի շնորհանդեսի՝ Կապելլան կատարեց Երևանի քաղաքի օրհներգը՝ «Էրեբունի-Երևան» խմբերգը:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14:
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 20.11.2009 թ.:
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА